ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2020 թվականի N 819-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N773-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 31-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին» N773-Ա որոշման 1-ին կետի «հոկտեմբերի 2-ին» բառերը փոխարինել «հոկտեմբերի12-ին» բառերով:

2. Որոշման մասին տեղեկացնել մրցույթի մասնակիցներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 30
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հոկտեմբերի 2020 թվականի N 820-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐԹՈՒՐ ԱՆՏՈՆՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Արթուր Անտոնյան»-ի 2020 թվականի հոկտեմբերի 1-ի N87 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Նովոսելցովո, 2-րդ փողոց, տուն 53 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արթուր Անտոնյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2020 թվականի չորրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 01
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 հոկտեմբերի 2020 թվականի N 821-Ա

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետը, 48-րդ կետը և 53-րդ կետի բ) ենթակետը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Էմմա Ստեփանի Հովեյանին, Արթուր Ժորայի, Աիարոն Ժորայի, Անահիտ Ժորայի Ալբերտյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակարանին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ 1725740, տրված՝ 31 . 08 . 2005) ՀՀ Լոռու մարզ, ք . Տաշիր, Կիրովի փողոց,մաս թիվ 17բ, բնակարան թիվ 53 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 6-րդ թաղամաս, Երևանյան փողոց, բ/շ 17/2, բնակարան 53 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

ՏԱՇԻՐ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ LORI REGION TASHIR MUNICIPALITY ТАШИР МУНИЦИПАЛИТЕТ ՀԱՄԱՅՆՔ RA

2020թ. հոկտեմբերի 02
ք.Տաշիր